

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

### 1.1.1. 2000թ. հունվար-հոկտեմբերի ՀՆԱ-ի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը 2000թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 833125.4 մլն. դրամ և 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նրա աճի տեմպը կազմել է 104.0 տոկոս :

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում հետևյալ հիմնական ճյուղերի ավելացված արժեքի հավելաճով. արդյունաբերության՝ 4.3%-ով, շինարարության՝ 22.6%-ով, առևտրի և հանրային սննդի՝ 7.1%-ով: Ընդ որում, հարկ է նշել, որ ՀՆԱ-ի աճը որոշ չափով դանդաղել է գյուղատնտեսության ճյուղի ավելացված արժեքի աճի տեմպի նվազման (97.6%) հաշվին, որը պայմանավորված է անբարենպաստ կլիմայական պայմաններով (երաշտով):

Համախառն ավելացված արժեքի աճը, հիմնական գներով, այսինքն, առանց «ապրանքների և ներմուծման զուտ հարկերի» բաղադրիչի ներառման, կազմել է 104.1 տոկոս: Ապրանքների և ներմուծման զուտ (առանց սուբսիդիաների) հարկերի աճի տեմպը կազմել է 102.3 տոկոս:

**ՀՆԱ-ի աճի տեմպի դինամիկան**  
(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)

